Արձանագրություն թիվ 3

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

26 հոկտեմբերի 2016թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Ներկա էին խորհրդի բոլոր 14 անդամները:

Օրակարգ

1. Դասավանդման պրոցեսում տեղատվական տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման վիճակի քննարկում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան/
2. 2016-2017 ուս.տարվա ամփոփիչ քննությունների հարցաշարերի , ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
   /զեկ. Ա.Շ.Մարգարյան/
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի արաջին հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի դեկան Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց, որ ֆակուլտետում դասավանդող մի խումբ դասախոսներ դասապրոցեսն անց են կացնում տեխնիկական միջոցների զուգակցմամբ և հաճախ օգտվում էին բնագիտական ֆակուլտետի համակարգչային սրահներից և 5-րդ լսարանից, որը կահավորվել է հատկապես կիրառական արվեստի ֆակուլտետի դասապրոցեսները կազմակերպելու համար, սակայն 2016թ.սեպտեմբերի մեկից ֆակուլտետի կազմում գործում է համակարգչային սրահ՝ անհրաժեշտ գույքով և տեխնիկական միջոցներով: Բանախոսը նշեց, որ <<Արվեստի պատմություն>>, <<Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ>>,<<Էկոլոգիայի բնապահպանության հիմունքներ>> և նմանատիպ այլ դասընթացների ժամանակ

հաճախակի օգտվում են ընձեռնված հնարավորությունից և խորհուրդ տվեց մնացած դասընթացների իրականացման ժամանակ նույնպես օգտվել դասավանդման ժամանակակից մեթոդներից և համակարգչային սրահներից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- ,,Գծանկարի, գունանկարի և քանդակի" ամբիոնի ասիստենտ Ս.Թ.Հովհաննիսյանը: Նա կարևորեց դասավանդման օժանդակ և դիդակտիկ պարագաների դերն ու նշանակությունը և փաստեց, որ վերջիններս օգնում են դասավանդողին ավելի „հարուստ" դարձնել դասախոսությունը, իսկ ուսանողներին՝ ավելի դյուրին և ըմբռնելի դարձնել մատուցվող նյութը:

ՈՐՈՇԵՑԻՆ- ֆակուլտետում դասավանդվող բոլոր առարկաների դասախոսներին հանձնարարել հավաքել համապատասխան էլեկտրոնային նյութեր, կազմել ներկայացումներ (պրեզենտացիաներ) և կիրառել դասապրոցեսների ընթացքում:

Օրակարգի երկրորդ հարցի մասին տեղեկատվություն տրամադրեց „Կիրառական արվեստ" և ,,Դիզայն"մասնագիտությունների պատասխանատու, ասիստենտ Ա.Լ.Չիբուխչյանը: Նա նշեց, որ հարցը բավականին երկար ժամանակ քննարկման փուլում է և ավարտական աշխատանքների ղեկավարները ուսանողների հետ եկել են ընդհանուր որոշման և ներկայացրել իրենց թեմաները:

Նիստին ներկա էին <<Արվեստի պատումություն>> առարկան դասավանդող ասիստենտներ՝Ա.Ուլիխանյանը և Լ.Լաչիկյանը: Նրանք ներկայացրեցին ամփոփիչ ատեստավորման քննության հարցաշարը, որը քննարկվել և հաստատվել է <<Տուրիզմի կառավարման>> ամբիոնի թիվ 2 նիստում /05/09/2016/: Ամփոփիչ ատեստավորման հարցաշարում կատարվել է որոշակի փոփոխություններ՝ հաշվի առնելով նախորդ ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի դիտողությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.Նախնական հաստատել թեմաները՝ 2017թ. փետրվարին վերջնական անդրադառնալու և հաստատելու պայմանով:

Դասախոսները ներկայացրին 63 հարցերից բաղկացած հարցաշարը, որն ընդգրկվում է հայ և արտասահմանյան արվեստների պատմության դասընթացների առանցքային հարցերը:Մասնավորապես նշվեց, որ նախորդ տարիների հարցաշարերից տարբերվում է հայ արվեստի գործիչների և գործերի ավելացումով՝ հատկապես մեծ տեղ է հատկացվել XX դարի հայ նորագույն արվեստագետների ստեղծագործություններին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-<<Կիրառական արվեստ>> մասնագիտության պատասխանատու Ա. Չիբուխչյանը և ասիստենտ Դ.Չիբուխչյանը և նշեցին , որ կատարված փոփոխությունները միանշանակ արդարացված են և առաջարկեցին հաստատել ամփոփիչ ատեստավորման հարցաշարը*:*

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. Հաստատել <<Կիրառական արվեստ>> մասնագիտության 2017թ ամփոփիչ ատեստավորման հարցաշարը:

2.Հանձնարարել կրթական ծրագրերի պատասխանատու Ա.Չիբուխչյանին՝ տրամադրել հարցաշարը չորրորդ կուրսի ուսանողներին և կազմել կոնսուլտացիաների գրաֆիկ:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Շ.Մարգարյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք.Հ.Մխիթարյան